
**ՄԱՐԴՈՒ ԵՎ ԱՍՏԾՈՒ ՀԱՆԴԻՊԱԴՐՈՒՄԸ
ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՄԸ**

ԱԼԱ ԽԱՌԱՏՅԱՆ

Քրիստոնեության կերպարների վերարժարծումները Դանիել Վարուժանի գործերում սկսվում են հենց առաջին ժողովածուից և ունեն երկակի բնույթ՝ կամ կրոնի ընկալում, կամ ուղղակի միֆոգոտագործում՝ առանց կանխակալ վերաբերմունքի, այսինքն՝ առանց կրոնի դերը տվյալ միֆի մեջ ընդգծելու. դրանք վերցված են ուղղակի կայուն իմաստավորում ունենալու համար՝ որպես պատրաստի տեքստային միավորներ՝ «Ավերակներու տիկիներ», «Օրհնյալ ես դու ի կանայս», իսկ մնացած դեպքերում քրիստոնեական միֆերի օգտագործումը բանաստեղծությունների կառույցում՝ բացահայտ կամ այլագրված, հստակ վերաբերմունք են պարունակում կրոնի նկատմամբ: Առաջին գերխնդիրը, որ ներդրվում է Վարուժանի «Հեթանոս երգերի» և «Գողգոթայի ծաղիկներ» շարքի հարաբերության հիմքում, հեթանոսության և քրիստոնեության հարաբերությունն է՝ կրոնական տեսանկյունից: Քանի որ բանաստեղծի առաջադրանքը, թվում է, հակասական է, ուստի հենց այդպես էլ ընկալվել է գրականագիտության մեջ, սակայն իրականում «Գողգոթայի ծաղիկներ» շարքը շարունակում է «Հեթանոս երգեր» շարքի ենթատեքստը և կանխադրումները: Հատկանշական է քրիստոնեական կրոնի վարուժանական ընկալումն ու մեկնությունը՝ թե՛ բանաստեղծական, թե՛ տեսական առումով: «Կրոնքները» հողվածում Վարուժանը դնում է աստծո հարցը, որ մյուսներից բարձր է «բնությանը թե պաշտոնով – շատ ավելի գերադաս՝ այնպես որ ազգեր և ժողովուրդներ մերթ տարտամորեն, մերթ պայծառապես միշտ զգացած են իրենց ճակատագրի վրա միակ և գերմարդկային ուժի մը փոթորկումը, որ միևնույն է և հավետ միևնույնը պիտի ըլլա ինչ փույթ թե զինքը կանչին տարբեր անուններով՝ Արամազդ, Դիոս, Ջևա, Թոր, Նեմեսիս, Բահադ, Պրահմա, Ահուրա-Մազդա, Եհովա, Աստված»¹: Աստվածների հերթափոխը, ըստ Վարուժանի, ընդամենը ինչ-որ մեկի գերապատվությունն ու ակտիվացումն է մյուսների համեմատ: Միշտ կա միակ աստված, որին ստորադասվում են մնացածները, իսկ միաստվածության պայմաններում՝ մեկը ակտիվանում է մյուսների բացառմամբ, որոնք «չաստվածության» դիրքերում են: «Ցեղին սրտում» Վարուժանը ակտիվացնում է Նեմեսիսին և Վահագնին՝ ցեղի ծագումնաբանությունը ճշգրտելու, նախածնը հայտնաբերելու համար, «Հեթանոս երգեր» շարքում կյանքի շարժման հիմքում դնում է Վանատուրից² գործառույթների շնորհիվ մարդակերտման համար հայրաստվածացնելով նրան, իսկ «Գողգոթայի ծաղիկներ» շարքում՝ Քրիստոս-Աստված միություն-

¹ Տե՛ս Դ. Վարուժան, ԵԼԺ, հ. 3, Եր., 1987, էջ 89 (այս գրքից հետագա մեջբերումների էջերը կտրվեն տեքստում, կից):

² Վարուժանի ընկալմամբ՝ Վանատուրը երկու սեռերի՝ արականի և իգականի անբաժանելի միասնությունն է:

ընդ: «Տարտամն» ու «պայծառաջունը» Վարուժանը համապատասխանաբար տարածում է քրիստոնեության և հեթանոսության վրա, բայց դա անում է ոչ թե հողվածում, այլ ժողովածուում: Նրա համար հիմնախնդիր է դառնում այդ «միակի» ըմբռնումը: Քանի որ Վարուժանը «դիցաբանական կրոններին» նայում է որպես ազգային և մարդկային նկարագիրը կրողների, ապա այս պարագայում հայրենական աստվածները, հենց հայի սկզբնաձևը լինելով և դրանով իսկ ճշմարիտ լինելով, Վարուժանի համար պայծառաջուն են, այն լույսը, ուր պիտի գնա ցեղը, և *ինչպես ամեն ինչ, որ ցեղի դիմագծի խաթարումն էր, այնպես էլ քրիստոնեությունն է այդպիսին դիտվում* որպես ցեղագերծում: Դիցաբանական կրոններում ցեղային կամ ավելի լայն իմաստով՝ մարդկային հատկանիշներն էին աստվածանում, որոնցից մեկը գերիշխող էր մյուսների նկատմամբ: Վարուժանը, ելնելով ցեղայինի դիրքերից և քաղաքական ենթատեքստից, որպես մարդկայինի կրողի՝ գերակա է դարձնում Նեմեսիսին, իսկ ազգային հատկանիշները կրողի դիտանկյունից աստվածացնում է Թորգոմին և պաշտում Վահագնին: Ցեղից անցնելով մարդու խնդրին՝ նա իր մարդակերտման մոդելի համար անհատական նախընտրությամբ միակ և բացարձակ աստված է ընկալում Վանատուրին, որի գործառույթների կազմաբանության հիմքը արարումն է: Կրոնի զարգացումը բերում է քրիստոնեության, որի ընկալումը բանաստեղծության մեջ միտքը հյուսում է և՛ ազգայինի, և՛ առհասարակ մարդկայինի պարագրկումներով: «Տարտամություն» բերող վերոհիշյալ միակ աստվածը Քրիստոսն է. «Կ'ողբամ ձեր մահն, ո՛վ հեթանոս Աստվածներ» ձևակերպումը իմաստային առումով հարաբերվում է ինչպես ցեղայինի մահվան, այնպես էլ մարդկայինի խեղաթյուրման՝ «Մեռա՛վ Խորհուրդն. և Բնությունն է արյուններ /Օրենքներու կարկինի սուր սըլաքով»: Ցեղի կորուստը քրիստոնեության հետ հարաբերվում է ոչ թե որպես պատճառի, այլ հետևանքի, պապերից հեռացվածությունը (ցեղայինի մահը) պարտադրում է քրիստոնեություն, որ հանգում է մահվան, և այս հեթափոխի մեջ՝ և՛ զրկման, և՛ կերպարանափոխման, մարդու կերպարը կրկին պասիվ-կրավորական է՝ «Տանս ակութեն, Թերափներ, /Ո՛ւր հեռացաք...» և «Միայն սմարես կախվեր է Խաչ մ'հաղթական՝ /Ուր կա լոկ փառքը Մահվան»: «Չեռացաք», «կախվեր է» բառերը մարդու կերպարն ընկալել են տալիս որպես պասիվ իրողություն: Որոշակիացնող աստվածների հեռացումը բերում է անորոշման. ցեղային և մարդկային որոշակի դիմագիծ ունեցող մարդը վերածվում է վերացական մարդու՝ անդիմության:

Տեսնք, բոլոր մեր անտառներն ու ծովերը

Աղբերակներն ու երգիքները խաղաղ

Ամայացա՛ն ու տաղտկացա՛ն: Այժմ, ավա՛ղ,

Մարդն է ինկած գարշապարին տակ հըսկա

Խուլ Աստուծո մը հրեա (էջ 55, ընդգծ. մերն է - **Ա. Խ.**):

Վարուժանի պոետիկայում կրոնի դերը, առհասարակ, մարդու կյանքում հյուսվում է որպես շարժիչ, կյանքի շարժումը պայմանավորող հիմնական ազդակ, և կրոնական հեթափոխի մեջ (քրիստոնեություն) ողբերգականի գիտակցումը կապվում է այդ ազդակի կորստյան հետ, այլ կերպ ասած՝ մարդը ակտիվ է և շարժում ու զարգացում է ապահովում կրոնի հետ որոշակի չափորոշիչներով հարաբերվելով, իսկ այդ սկզբունքների և չափորոշիչների խախտումը, որ քրիստոնեության մեջ առկա է վերոհիշյալ

արարման բացասմամբ, փոխում է մարդու և կրոնի հարաբերության կերպը, կրոնը դառնում է թելադրող և ոչ թե մարդու էության մարմնավորող, ինչպես հեթանոսական միջերը, և այդ հարաբերության մեջ մարդը դառնում է կրավորական: Վարուժանը, «Գողգոթայի ծաղիկներ» շարքում հաճախակի շահարկելով Քրիստոսի բերած «տաղտուկն» ու «ոչնչությունը», դրա մեջ ենթիմաստավորում է աստծո տեսակի որոնումը: Պասիվ քրիստոնյա մարդու խորհրդանիշերից մեկը «Մենավորն» է, որի առանձնությունը և առանձնության մեջ ինքնակամ ու հավերժ որոնումը «Ոչնչությունը պճնող» աստծո որոնումն է, և դրա արդյունքը մարդու չգոյացումն է՝ «Հիմա, ավա՛ղ, ի՞նչ կը մընա ալ ինձի. / Սոխի՛ր, մոխի՛ր, և ավերա՛կ. և նույնիսկ / Խորունկ տուկուն մ'իմ իսկ անձիս նայելու»: «Լքում» բանաստեղծության մեջ կրոնի և մարդու հարաբերության կերպը՝ որպես ազդողի և ազդվողի, բանաձևային արժեք ունի և անթաքույց հանգում է քրիստոնեության բերած կերպի մերժման՝ հանուն կյանքի.

Կանու՛խ է դեռ, իմ ձեռքերս իմ արյան մեջ

Թաթխելու դեռ կանու՛խ է:

Երբ շիրմաբույր իմ գոյությանըս կարոտ

Սըրտերուն մեջ, սըրտերուն հետ նախ մեռնեմ.

Եվ հանձնեմ քնարս աստվածներուն ոլիմբյան,

Որ կը դարձնե դեռ հաճո

Իմ կյանքս ուրիշ արեգնամուկ կյանքերու

(էջ 146, ընդգծ. մերն է - Ա. Խ.):

Սա նաև որոշակիացնում է Վարուժանի միտքը. արևը բոլոր աստվածությունների հիմքն է, և մարդու ձգտումը դեպի աստված՝ արևի (կյանքի) որոնումն է: Բնաբանը, որ դրվում է այս բանաստեղծության վրա, «ուլիմբյան» աստվածներին հակապատկեր է դնում քրիստոնեությունը՝ ինքը նույնանալով Հոբ Երանելուն, որը, լինելով աստվածավախ ու մոլեռանդ աստվածապաշտ, անիծում է իր ծնունդը, որպեսզի նախատի աստծուն, որ չխնայեց անձնուրաց հավատացյալին: Քանի որ քրիստոնեությունը նրան դնում է «շիրմաբույր» գոյակերպի մեջ, Վարուժանը թեքվում է դեպի օլիմպյան աստվածները, որոնք տանում են դեպի արևը: Այս ամենի հետևությունն այն է, որ *Քրիստոսը, ըստ Վարուժանի, չունենալով արևային էություն, հանգեցվում է չաստվածության և բանաստեղծին մղում արև աստծո որոնման և չաստվածության հաղթահարմանը*, որ իրականանում է ստեղծագործական արարքի և մարդարարման շնորհիվ («Բեգաս» և «Վարուժնակիս»): Քրիստոսը, ի տարբերություն հայրենական աստվածների, զուրկ է արարումից և լիարժեք չէ, ըստ այդմ՝ հեթանոս աստվածների պաշտամունքը Վարուժանը կապում էր արարման հետ և այն մեկնաբանում որպես մարմնավոր սիրո աստվածարում: Վարուժանը արարման և իր կերտած մարդու մոդելի հակաբևեռում է դնում քրիստոնեությունը, որը համարում է մարդու լիարժեք կայացման կասեցում: Մեռած աստվածների և նոր կրոնի պարտադրանքով առաջացած անդիմության խնդիրը բանաստեղծական շարքում լուծվում է հակադիր կառույցի միջոցով («Բեգաս», «Լույս»), որոնցում բանաստեղծը փնտրում է իր անդիմության հաղթահարման ելքերը: Առաջին բանաստեղծության կազմաբանությունը որոշում են երկու խորհրդանշանները՝ Բեգաս և արև=լույս, իսկ երկրորդինը՝ լույսը: «Բեգաս» բանաստեղծության մեջ հարադրվում են երկու խորհրդանի-

շերի իմաստային հիշողությունները (նոր իմաստ չի ներդրվում): Ձին բոլոր մշակութայիններում նախ խորհրդանշել է լույսն ու կրակը և պայծառատեսություն, գերբնական լսողությունն ու մոլորվածին ճիշտ ուղի տանելու շնորհը³: Տեքստը խորհրդանշի՝ տեքստային իմաստի մեկնության զուգադիր հնարավորություն է տալիս: Ձին, Պեզաս անվանվելով, բնորոշվում է նաև պոետական ներշնչմամբ ինչպես իրականին հասնելու, այնպես էլ՝ գերիրականին, գերբնականին, որը բանաստեղծի հեռահար նպատակն է և մակաբերվում է միայն բանաստեղծության վերջից և ժողովածուի կանխադրող իմաստային միտումներից: Պեզասը բանաստեղծության մեջ մատնանշում է բանաստեղծի կերպարը, և լինելով ներշնչակիրը՝ նաև բանաստեղծի մղումը՝ բանաստեղծելը: Բանաստեղծության կառույցի մակերևույթի հասանելի, մատուցվող իմաստը բանաստեղծի ու արվեստի խնդիրն է, խնդրի լուծումը և բանաստեղծի արվեստի բնութագրումը.

Ձետեղեցի քամակիդ ավասիկ թամբըդ՝ ծեփված

Ադամանդով,

Եվ դրրի սանձըդ՝ հյուսված

Շանթով

Եվ նուսիդ վրա գերդ մըրրիկ

Ես նետվեցա ավասիկ (էջ 56):

Բանաստեղծության այլաբանության այս կողմը մեկնաբանել է Վ. Գաբրիելյանը. «Սլացք ու ծգտում, որ այնպես ճշտորեն խորհրդանշում է Վարուժանի արվեստի էությունը: Հրեղեն Պեզասի սանձահարումը բանաստեղծի հաղթանակն է ընդդեմ Պոեզիայի դիմադրության: Պեզասի հետ դաշնությունը (նա ունկնդիր է բանաստեղծի խոսքին) Պոեզիայի բարձունքը (արևոտ լեռնագագաթը) նվաճելու երաշխիք է: Պեզասի վրա բանաստեղծի մրկային սլացքը, խոչ ու խութերի հաղթահարումը և լեռան գագաթին կոթողվելը՝ Պոեզիայի բարձունքի նվաճումն է»⁴:

Բանաստեղծության առաջին հատվածում, երբ արվեստը իրենը չէ, տրված չէ, բանաստեղծը պասիվ դիրքում է, ինչպես առհասարակ մարդու կերպարը՝ շարքում, իսկ հաջորդ պատկերում բանաստեղծի ու արվեստի՝ փոխադարձաբար միմյանց տրվելը բանաստեղծի կերպարը դարձնում է մոդել՝ գործուն կերպար: Բանաստեղծության հաջորդ մասում արդեն ակտիվացած կերպարը արվեստի միջնորդությամբ գնում է դատարկության և դիմածածկման հաղթահարման («անդունդներուն վըրայեն և վըրայեն ձյուններուն»): Սկզբունքային հնարքով Վարուժանը իր և արվեստի փոխտրման պատկերի մեջ համաբանորեն ներդնում է «գարշապարին տակ»-ը, այսինքն՝ պարտված մարդու կերպարի կենսագործմանը հասնելը: Արևը բանաստեղծի վերջնական նպատակն է, որ համակցվելով Պեզասին՝ անսքող խորհրդանշում է ստեղծագործ ուժը, իսկ զուգորդվելով ներքին իմաստին՝ տանում տղամարդու կերպարի սկզբին և կենսական ճշմարտությանը՝ խարսխվելով մշակութաբանորեն տրված խորհրդանշի իմաստի հիշողության վրա՝ որպես երկնքի մարմնավորում կապվելով տղամարդու հետ: Այս խորհրդանշերի արարման իմաստը ներդրված է անդունդներից, այսինքն՝ շրջված կերպարից դեպի արևը՝ իր լիարյուն նախաձևը գնացող կերպարում: Որպես հավերժական և ճշմարիտ կյանքի

³ Տե՛ս "Энциклопедия символов, знаков, эмблем", М., 2000, էջ 250:

⁴ Վ. Գաբրիելյան, Դանիել Վարուժան, Եր., 1978, էջ 334:

մարմնավորում՝ արևը Վարուժանի համար աստծուն է հանգում և այն ուժն է, որ դեպի իրեն, այսինքն՝ բարձրի ձգտում է առաջացնում և հակադրվում գարշապարի տակ պահող էությանը: Քանի որ բոլոր աստվածությունների հիմքը, ըստ Վարուժանի, արևն է («Կրոնքները» հոդվածը), ապա այն վերմարդկային և գերմարդկային էության մարմնավորում է և, ըստ այդմ էլ, երկակի դրսևորում ունի. մի կողմից՝ ստեղծագործություն, որ արարչության ձև է, մյուս կողմից՝ մարդկային կյանքը կառավարող գերբնականի այլագրում, որը հակառակ է *Մահով* խորհրդանշվող Աստծուն՝ «Միայն սնարես կախվեր է հաչ մ'հաղթական / Ուր կա լոկ փառքը Մահվան»: Այս ամենով հանդերձ՝ Պեգասի թռիչքը Վարուժանի համար նաև Աստծո տեսակի և բանաստեղծության մեջ գաղտնագրված ստեղծագործության՝ արարչության ձևի որոնումն է ու այդ խնդրին լուծում տալը. ստեղծագործությունը որպես լավագույն արարչություն և արարչության ներշնչանք տանում է տղամարդու կերպարի և գործառույթների հստակեցման.

Եվ սըմբակներն ոսկեկուռ՝ որոնց ներքև իբրև պայտ
Լուսընկաներ գամեցի,
ժայռերուն վրա Իտեալի մը պողպատ
Կ'երգեին երգն առնացի՝
Ձոր խըմելու համար ես սիրտըս բացի
Ձերդ ծովու
Խեցի (էջ 57):

Արարելը կապելով տղամարդու հետ՝ Վարուժանը ստեղծագործելու միջոցով հաստատում է տղամարդու այդ գործառույթի բացառիկությունը և կյանքի լինելիության միակ հրամայականը: Բանաստեղծության շարունակության մեջ խորհրդանշի գերակա իմաստի՝ ստեղծագործելու հաղթահարմանը զուգահիշ կառուցվում է նաև տղամարդկային հաղթանակը, որ բնութագրվում է իբրև ստեղծում: Ձիավորի մշակութաբանորեն ամրագրված բացառիկ իմաստներից մեկն էլ հաղթանակն է, և պարուրվելով արևային հատկանիշներով՝ բանաստեղծության մեջ տրված իմաստները, որպես մարդկային գործառույթներ այլագրելով, Վարուժանը ձիուն տանում է աստվածացման, այլ կերպ ասած՝ ստեղծագործելու մեջ տեսնելով ոչ միայն մարդկային հատկանիշների բացառիկ դրսևորումը, այլև՝ Մեռած աստվածների հատկանիշների առկայությունը՝ առաջադրում է նոր աստվածություն՝ «Ո՛վ Ձիս-Աստված», որում և՛ ստեղծագործելը կա, և՛ մարդարարելը: Բանաստեղծը աստվածացնում է նաև իր արարող ես-ը և հակադարձ արարքով հակադրվում «խուլ աստծուն».

Սիրտս, ուր հանճարըս կ'ապրի, կը սերմանեմ լիաբուռ.
Ի՛նչ որ Արևն ինձ կու տա՝ զայն կու տա միտքս Մարդուն.
Տե՛ս, աստղերու ժըպիտներ և հուր վարդեր անթառամ
Կը տեղամ
Որդիներուն մեջ կավի.
Կը տարածեմ Երկրիս վրա արշալույսի ծիրանին.
Մինչդեռ դյուրավ կըրնայի
Տարածել շուքն հասակիս՝ Երկրագունդին վրա փանաք
Ու խավարե՛լ զայն համակ (էջ 63):

Եվ հենց արարելու հատկանիշով էլ Մարդուն հակադրում է Աստծուն. արարումը մարդուն ազատության մեջ է դնում, քանի որ նա դրսևորում է

այն, ինչն իր եռությունն է, իսկ աստված չի դրսևորվում, եթե արևը չէ նրա հայտանիշը: Աստված չի արարում, ուրեմն նա գերի է, իսկ մարդը արարում է, ուրեմն «արեգդեմ» է, այսինքն՝ աստվածային: «Բեգասը» Վարուժանի կրոնական ընկալումներում կրոնական հերթափոխի նոր լուծում է գտնում, հրեա աստծուն շարունակում է (փոխարինում է) մարդը, որի մեջ գերակշիռ է արարման գործառույթը: Լինելով շարային բանաստեղծություն՝ «Բեգասը» յուրօրինակ գաղափարական բեռնվածություն է վերցնում իր վրա և որոշակի լուծում տալիս շարքի հիմնահարցին՝ ո՞րն է մարդու բնույթը: Շարքի՝ «Բեգասին» նախորդող բանաստեղծություններում հաստատագրված մարմնավոր սերը, որ ինքնանպատակ չէր և ենթատեքստում ուներ սեռականի պանծացումը, նշանակում էր «մարմնավորի հոգևորում, հարստացում, մարդկայնացում»⁵, և որի նպատակը արարումն էր, ասել է թե՛ մարմնավոր սերը արարման բնական նախադրյալն է: «Բեգասը», շարքում համապատասխան դիրք գրավելով, ենթադրում է երկու արարումների՝ ստեղծագործական և սիրո (մարդու) համարժեքում, «Բեգասը» դառնում է բանաստեղծի ողջ ստեղծագործության խորհրդանիշ և արարման արարում, այսինքն՝ ստեղծագործության մեջ մարդարարումը ցույց տվող ստեղծագործական արարում, ու հակադարձ համեմատական քրիստոնեությանը: Բանաստեղծությունը Վարուժանի համար բացառիկ հնարավորություն է իր՝ մարդկային նոր՝ ստեղծագործող մոդելը կերտելու, իր նախընտրած իրականությանը հասնելու համար, որի մեջ տրվում է մարդու նոր չափորոշիչների համակարգ, որ վերահաստատում է մարդու բուն եռությունը պայմանավորող բնական նախադրյալները: Բանաստեղծական հիմնահարցի լուծումը և նաև անփոփոմն է «Վարուժնակիս» բանաստեղծական կառույցը, որ ոչ թե կերտում է արարելու տառապանքը, ինչպես «Բեգասում», այլ արարվածի բերկրանքը, ոգեղեն գոհությունը և պաշտամունքը:

Քեզի՛ համար, ո՛վ իմ քերթվածըս անմահ՝
Ձոր արյունովս հըղացա,
Ձոր երգեցի՝ հպելով սըրտիս լարերուն
Լարն ամենեն դյուրագգա:

Քու ձեռքըդ լոկ դեռ կը բըռնե գիս կանգուն
Ավազներուն վրա փառքիս.
Եվ մազիդ մեկ թելը բավ է կապելու
Տիեզերքին հետ՝ հոգիս (էջ 150):

Բանաստեղծությունը, ամբողջացնելով ասելիքը, կերտում է կործանվող մարդկային կերպարի դիմափոխումը՝ ինքնալիարժեքում գիտակցող մարդուն, որը «մահվան պանծացումից» գնում է դեպի տիեզերքի հետ ամբողջացում ու մարդկային իրավունքի հաստատում:

«Գողգոթայի ծաղիկներ» շարքի բնաբանը՝ «Փա՛ռք սարբինային. Քրիստոս կը պատարագե», ժողովածուի խոսուն բանալիներից է և որպես շարքի հետագա հյուսվածքի մեկնության ընդհանուր սխեմա՝ պարփակում է հեղինակի ընթացում-ընկալումն ու գոյավորում ժողովածուի ավարտը: Բնաբանի առաջին հատվածը միևնույն արարման հենքի վրա է դնում

⁵ Գ. Շաքարյան, Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում, Եր., 2002, էջ 170:

երեք էություններ՝ Բաքու, Ներոն և Քրիստոս, որոնցից յուրաքանչյուրը բանաստեղծի ընկալմամբ տարբեր կերպ է օգտագործում այն. Բաքու=Վանատուրը արարումն է, Ներոնը վայելում է և կործանում մարդկային արարումը՝ խորհրդանշելով ինքն իր դեմքը կորցնող պատմական երկարատև ժամանակաշրջանի մարդուն, իսկ պատարագող Քրիստոսը շահարկում է դիմագրկված մարդկանց գործառույթները: Պատարագը, ըստ քրիստոնեական ծիսակարգի, երկրորդ դարից սկսած գործածվել է զոհաբերության նշանակությամբ՝ նշանակելով Քրիստոսի պատարագվելը խաչի վրա⁶: Վարուժանը շրջում է կրոնական այդ իմաստը և ներկայացնում ոչ թե Քրիստոսի զոհաբերվելը, որ «ճանապարհի խաչի» բանաստեղծության մեջ այլաբանվում է բանաստեղծական ես-ով, այլ զոհաբերված Քրիստոսից կերպարանցում է անում անդեմ մարդուն՝ նույն փոխաբերությամբ՝ դատարկությամբ, ինչով բնութագրում է զոհաբերված Քրիստոսին.

Երբ միջոցին մեջ տեղի տրված չէր
Դեռ Ոչընչությունն այս Տիեզերքին՝
Ես կարծեմ Աստված բան մը կ'որոնեմ՝
Որ դարման ըլլա տաղտուկի վերքին (*«Աստուծո լացը»*, էջ 85):

հմմտ.՝

Ո՛վ խաչված Հիսուս,
Դուն որ նիզակված սիրտ մը ունեցար՝
Գըթա՛ սըրտիս հույզ.
Օր մ'որ անոր մեջ բաբախեց աշխարհ՝
Հույսին տեղ այսօր Ոչի՛նչը կ'ապրի:
Սիրտըս սափոր մ'է, աճյունս՝ անոր մեջ,
Զոր պիտի հովերն ամենն մահես վերջ
(*«Ճանապարհի խաչի»*, էջ 87):

Քրիստոնեության ըմբռնումը որոշում է նաև կրոնի մեկնության կերպը. որպես կրոնական հերթափոխի վերջին հանգրվան՝ այն զարգացում է (անկախ իր լավ ու վատ ընկալումներից), և Քրիստոսը՝ որպես զարգացած քաղաքակրթության արտահայտություն (բազմաստվածությունից միաստվածության), դառնում է նաև ժամանակաշրջանի զարգացումների խորհրդանիշը. ազգային կրոնից օտար կրոնի անցումը, եթե զարգացածության արդյունք է և հանգել է ցեղայինի կործանման, ապա այդ համաբանությամբ մարդկության զարգացածությունը բերում է մարդկայինի կործանման և կապվում քրիստոնեության հետ: Այդ պատճառով ընկալման մեկնություն-բանաստեղծություններում այդ կործանման պատկերները զուգորդվում են Քրիստոսի անվանը՝ կան ուղղակի անվանվելով, կան աղոթքի ու գործառույթների հիշատակմամբ: Այս առումով բնորոշ մեկնություն-բանաստեղծություններից մեկը «Սպասումն» է, որի արտաքին իմաստը թվում է, թե կապ չունի քրիստոնեության հետ, բայց «սպասման աղոթքի» պատկերը ենթաիմաստավորում է քրիստոնեության մեկնությունը.

Մըխտ ճրագին շառ լույսեն
Հացերն ամբողջ կարմիր են.
Կարծես անոնք թորեին
Արյո՛ւն, նըման Քրիստոսի մը կողին,

⁶ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Եր., 2002, էջ 847:

Ջուրը գույնով քացախի
Կ'երագե հոն ընպանակին մեջ մեծդի:
Խաղաղավետ օրհնությունով մ'ընդհանուր
Օծված սեղան, հաց և ջուր,
Կ'ընեն աղոթքն ըսպասումի նը երկար
Երբ իրիկունն հոգնած բանվորը չի՛ գար (էջ 111):

Մարդու կյանքը պայմանավորող հացն ու ջուրը, կործանման ու դառնության խորհրդանիշերով (արյուն, քացախ) անմիջապես հարաբերվելով Քրիստոսի անվանն ու քրիստոնեական բարոյախոսությանը (հեզություն, համբերություն), կերտում են ինքնակործանումը: Որպես կրոնի զարգացման հերթափոխի համաբանությամբ զուգորդված ընկալման մեկնություն՝ բնորոշ է նաև «Մեռնող բանվոր» բանաստեղծությունը: «Միշտ մեռնելով ապրող» բանվորը՝ որպես զարգացած քաղաքակրթության խորհրդանիշ, կրում է զարգացած կրոնի դրոշմը՝ ապրել՝ մեռնելով, որ հանգում է քրիստոնեական ավարտաբանության՝ մահվամբ փրկության: Մահը Վարուժանի պոետիկայում իր բազմանգամյա կրկնությամբ դառնում է քրիստոնեության խորհրդանիշ և դրանով էլ հակադրվում է պոետիկայի գերհամակարգի արարմանը, որ կյանքն է: Կյանքը միակ ճշմարտությունն է, և աստվածարման հիմքը կապվում է դրա սրբացման հետ, իսկ դրան հակառակը չարարումն է, որ Վարուժանը հոմանիշում է քրիստոնեությանը: Առերևույթ վարուժանյան այս աքսիոմատիկ ճշմարտությունը կարող է հակասական թվալ՝ ժողովածուի մեկ այլ օղակ հանդիսացող արարման «Օրհնյալ ես դու ի կանայս» բանաստեղծության Մարիամի կերպարի աստվածարման հետ հանդիպադրվելու դեպքում, սակայն Մարիամը, աստվածաշնչյան գլխավոր կերպար լինելով հանդերձ, Աստվածաշնչում աստծո գործառույթներ չունի, բայց որպես միջականորեն տրված մարդկային էության բարձրագույն դրսևորում՝ բանաստեղծի կողմից աստվածարվում է, բայց ոչ քրիստոնեական ընկալմամբ, այսինքն՝ Մարիամի կերպարը ժողովածուում գործում է որպես միջ՝ անկախ կրոնականից, իսկ միակ բանաստեղծությունը, որտեղ խախտվում է Մարիամի կերպարի ոչ կրոնական ընկալումը, և ներդիր է քրիստոնեության մեջ ու մեկնվում է քրիստոնեության ընկալմանը համապատասխան, «խաբված կույսեր» բանաստեղծությունն է: Նախորդ բանաստեղծություններում տրված Մարիամի միջը կազմաքանդվում է, և խաբված կույսի համար որպես համարժեք է կերտվում Մարիամը՝ ապամիջականացնելով (պսակագերծելով) Աստծո կերպարը («Մարիամ՝ պղծված Երկինքեն»)՝ էությունը կորցրած մարդկային կերպարները նույնացնելով քրիստոնեության Աստծուն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Վարուժանի՝ հեթանոսություն-քրիստոնեություն հանդիպադրման պոետիկան նպատակամիտվում էր բնածին, նախնական մարդկային և ցեղային հատկանիշների վերահաստատմանը, հեթանոսությունը դրա կրողն էր, իսկ քրիստոնեությունը՝ դրա հակառակը՝ ո՛չ հայկականը և ո՛չ մարդկային էությունը:

АЛА ХАРАТЯН – Противопоставление человека и Бога в сборнике Даниэла Варужана “Языческие песни”. – В статье проанализирован образ Бога, созданный Даниэлом Варужаном в его сборнике “Языческие песни”. Работая над этим образом, поэт базировался на восприятии, свойственном как язычеству, так и христианству.

Варужан интерпретирует религию как основной стимул, обуславливающий движение жизни, и потеря этого стимула при смене религий чревата для человека трагедией. Нарушаются привычные принципы и критерии, в корне меняется тип отношений между человеком и небом. Бог уже не олицетворяет человека и его сущность, как в языческие мифах, а становится своего рода диктатором, обрекающим человека на духовную пассивность. Противопоставляя христианство и язычество, Варужан преследовал цель утвердить изначально присущее человеку и нации активное отношение к жизни. Язычество запечатлено в его сборнике носителем этого качества, тогда как христианство, наоборот, изображено чуждым армянину и вообще человеку началом.

ALA KHARATYAN – *The opposition of man and God in the "Pagan songs" by Daniel Varujan.* – The present paper seeks to analyze the concept of God in the "Pagan songs" by Daniel Varujan. The poet perceives God based on paganism and Christianity.

Considering the fact that the role of religion in Varujan's poetic style is interpreted as a basic stimulus providing the flow of life, in case of change of religion the thought about the tragic is associated with the loss of this stimulus. Hence, man is active, moves, and develops in accordance with certain religious principles, the violation of which may breach the relationship between man and religion and cause religion to become diktat. With his poetic manner, Varujan opposes paganism and Christianity in order to reveal the inherited and innate specifics, characteristic of man. Pagan religion implies all the mentioned specifics, whereas Christianity is foreign to the Armenian nature and spirit.